COVID-19
Փաստեր պատվաստանյութերի մասին

ՊԱՏՎԱՍՏՈՒՄՆԵՐԸ ՊԱՇՏՊԱՆՈՒՄ ԵՆ COVID-Ի ՎԱՏԱԳՈՒՅՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԻՑ

- COVID-19-ի դեմ պատվաստանյութերը նվազեցնում են COVID-19-ի հետևանքով ծանր հիվանդանալու, հիվանդանոցում հայտնվելու կամ մահանալու վտանգը: Դրանք նաև նվազեցնում են ձեր՝ երկարատև COVID-19-ով վարակվելու վտանգը:
- COVID-19-ի դեմ Pfizer-ի, Moderna-ի և Novavax-ի պատվաստանյութերը **թարմացվել են**՝ պաշտպանելու վիրուսի ավելի նոր ենթատեսակներից:
- Թարմացված պատվաստանյութը կարող է ավելացնել եղած պաշտպանվածությունը (առաջացած նախորդ պատվաստումներից կամ վարակներից), որը ժամանակի ընթացքում կարող է թուլացած լինել:

6 ԱՄՍԱԿԱՆ ԵՎ ԱՎԵԼԻ ԲԱՐՁՐ ՏԱՐԻՔԻ ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐ ՈՔ ՊԵՏՔ Է ՍՏԱՆԱ COVID-19-Ի ԴԵՄ ԹԱՐՄԱՑՎԱԾ ՊԱՏՎԱՍՏԱՆՅՈՒԹ

- **5 տարեկան և ավելի բարձր տարիքի ցանկացած անձ** պետք է այս աշնանը ստանա թարմացված COVID-19-ի դեմ պատվաստանյութի 1 դեղաչափ:
- **6 ամսականից 4 տարեկան երեխաների համար** պետք է խոսել նրանց բժշկական մատակարարների հետ այն մասին, թե պատվաստանյութի քանի դեղաչափ է նրանց անհրաժեշտ: Սա կախված է այն հանգամանքից, թե նախորդ տարիներին քանի դեղաչափ են նրանք ստացել:
- **Իմունային անբավարարություն ունեցող մարդիկ** հնարավոր է, որ կարիք ունենան լրացուցիչ թարմացված դեղաչափի: Խոսեք ձեր բժշկի հետ այն մասին, թե որն է ձեզ համար ամենալավ ժամանակը:
- **65 տարեկան և ավելի բարձր տարիքի** չափահասները պետք է ստանան COVID-19-ի դեմ թարմացված պատվաստանյութի լրացուցիչ դեղաչափ՝ իրենց նախորդ դեղաչափից առնվազն 4 ամիս հետո.
- Յուրաքանչյուր ոք պետք է պատվաստվի, նույնիսկ եթե նա **հղի է, կրծքով կերակրում է** կամ նախկինում վարակվել է COVID-19-ով:
- 12+ տարիքի այն անձինք, որոնք ի վիճակի չեն ստանալ Pfizer-ի և Moderna-ի պատվաստանյութ, կարող են ստանալ Novavax-ի խթանիչ դեղաչափը՝ իրենց վերջին դեղաչափը ստանալուց առնվազն 2 ամիս հետո:
- Հավելյալ տեղեկությունների համար այցելեք cdc.gov/coronavirus/vaccine:

COVID-19
Փաստեր պատվաստանյութերի մասին

ՈՐՏԵ՞Ղ ՊԱՏՎԱՍՏՎԵԼ

Եթե դուք ապահովագրություն ունեք, դիմեք ձեր բժշկական մատակարարին՝ պատվաստման համար հանդիպում նշանակելու համար: Պատվաստանյութը հասանելի է նաև ապահովագրություն չունեցող անձանց բազմաթիվ դեղատներում և համայնքային առողջապահական կենտրոններում: Նշում. պատվաստվելու համար անչափահասներին անհրաժեշտ է ծնողի կամ օրինական խնամակալի համաձայնությունը:



Ձեր թաղամասում վայր գտնելու համար այցելեք publichealth.lacounty.gov/vaccines կամ զանգահարեք **1-833-540-0473 կամ 2-1-1:**

Տանն արվող պատվաստում հասանելի է և կարելի է խնդրել՝ զանգահարելով **1-833-540-0473** կամ այցելելով VaccinateLACounty.com և սեղմելով In-Home Vaccines-ը:

ԼՈՒՐՋ ԿՈՂՄՆԱԿԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱԶՎԱԴԵՊ ԵՆ

- Հայտնի կողմնակի ազդեցությունները ներառում են՝ ցավ, այտուց և կարմրություն պատվաստանյութի ներարկման հատվածում, մկանների կամ հոդերի ցավ, ավշային հանգույցների այտուցում, ջերմություն, դող, գլխացավ և հոգնածության զգացողություն: Փոքրիկ երեխաների շրջանում կողմնակի ազդեցությունները ներառում են նաև լաց, հոգնածություն, քնկոտություն և ախորժակի կորուստ:
- Կողմնակի ազդեցությունները նշան են, որ ձեր իմունային համակարգը **ստեղծում է պաշտպանություն:** Դրանք կարող են ազդել ձեր առօրյա գործողությունների վրա, սակայն պետք է անհետանան պատվաստումից հետո մեկ կամ երկու օրվա ընթացքում:
- Լուրջ կողմնակի ազդեցությունները հազվադեպ են պատահում:

COVID-19-Ի ԴԵՄ ՊԱՏՎԱՍՏԱՆՅՈՒԹԵՐԸ ԱՆՎՏԱՆԳ ԵՎ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ԵՆ

- Դուք չեք կարող պատվաստանյութից վարակվել COVID-19-ով: Պատվաստանյութերից ոչ մեկը չի պարունակում COVID-19 հարուցող վիրուս:
- Պատվաստանյութերը փորձարկվել են տասնյակ հազարավոր մարդկանց վրա, ներառյալ՝ մաշկի տարբեր գույն ունեցող, տարեց և առողջական խնդիրներ ունեցող անձանց, և պարզվել է, որ դրանք **անվտանգ և արդյունավետ են:**
- Սկսած 2020 թվականի դեկտեմբերից՝ **հարյուր միլիոնավոր մարդիկ** ապահով կերպով պատվաստվել են COVID-19-ի դեմ:
- COVID-19-ի դեմ պատվաստանյութերը շարունակում են ենթարկվել ԱՄՆ-ի պատմության մեջ **անվտանգության ամենաուժեղ հսկողությանը:**
- Չկա որևէ ապացույց, որ COVID-19-ի դեմ պատվաստանյութերն առաջացնում են վերարտադրողականության հետ կապված խնդիրներ: Պատվաստանյութերն անվտանգ են հղի անձանց համար և խորհուրդ են տրվում հղիության մասնագետների կողմից: